ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ք. Մարտունի, Շահումյան 2,

Հեռ. ՝ 060-74-34-01

№ 922

11 հոկտեմբեր 2021 թ.

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Կ. ՄԱՐԳՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Մարգսյան

<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի պահանջներից ելնելով, ուղարկվում են Մարտունի համայնքի ղեկավարի կողմից 04.10.2021թ. մինչև 08.10.2021թ. ընկած ժամանակահատվածում ընդունված որոշումները:

Առդիր՝ 9 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ Հ. ՏՈՆՈՅԱՆ

կատարող՝
Ռ.Սահակյան
Հեռ. ՝ 060-755-333

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

N 302-Ա 04 հոկտեմբերի 2021 թվական

ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 4/4 ԵՎ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 4/5 ՀԱՍՑԵՅԻ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՆՈՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35 -րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 29.12.2005 թվականի №2387-Ն որոշման 48-րդ կետի, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մաին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի և 46-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով Ռեփսիկ Սարիբեկի Հակոբյանի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Մարտունի քաղաք Շահումյան փողոցի թիվ 4/4 և Շահումյան փողոցի թիվ 4/5 հասցեների գույքերի միավորման արդյունքում առաջացած նոր գույքին տրամադրել Շահումյան փողոցի թիվ 4/4 հասցեն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ Հ. ՏՈՆՈՅԱՆ

04 հոկտեմբերի 2021 թվական
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

N 303-Ա 05 հոկտեմբերի 2021 թվական

«ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՄԲԱՏ ՄՀԵՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑԻՆ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Մարտունի քաղաքային համայնքի Սմբատ Մհերյանի անվան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի տնօրենի 04.10.2021 թվականի №26 գրությունը, հաշվի առնելով, որ ՀՈԱԿ-ի աշխատակցին բարեխղճորեն կատարել է իր աշխատանքային պարտականությունները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. «Մարտունի քաղաքային համայնքի Սմբատ Մհերյանի անվան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի աշխատակիցին տրամադրել միանվագ դրամական պարգևատրում հետևյալ չափերով՝
Սարգսյան Գևորգ - 30000 (երեսուն հազար) դրամ:

2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսների կառավարման և եկամուտների հավաքագրման բաժնին կատարել վճարում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ Հ. ՏՈՆՈՅԱՆ

05 հոկտեմբերի 2021 թվական
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

N 304-Ա 06 հոկտեմբերի 2021 թվական

ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ, ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 2 ՇԵՆՔԻ 1-ԻՆ ՀԱՐԿԻ ԹԻՎ 22 ՍԵՆՅԱԿԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 653-659 հոդվածների, պահանջներով, հիմք ընդունելով Մարտունի համայնքի ավագանու 16 . 12 . 2021 թվականի թիվ 82-Ն և 23.07.2021 թվականի թիվ 62-Ա որոշումները.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Մարտունու համայնքապետարանի վարչական շենքի 1-րդ հարկի 10,36 քմ մակերեսով թիվ 22 սենյակը վարձակալությամբ հանձնել Կարինե Համբարձումյան Ա/Ձ-ին:
2. Տարածքի վարձակալության վարձավճար սահմանել 1քմ-ի համար 1000 /մեկ հազար/ դրամ ամսական:
3. Տարածքը վարձակալության հանձնել 5 տարի ժամկետով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ Հ. ՏՈՆՈՅԱՆ

06 հոկտեմբերի 2021 թվական
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

N 305-Ա **06 հոկտեմբերի 2021 թվական**

ԴԱՆԻԵԼ ԳԱԳԻԿԻ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 19.03.2015 թվականի №596-Ն որոշման, Մարտունի համայնքի ավագանու 16.12.2020 թվականի թիվ 82 -Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով Դանիել Գագիկի Մնացականյանի կողմից ներկայացված դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Դանիել Գագիկի Մնացականյանին տալ քաղաք Մարտունի, Պարույր Սևակի փողոց թիվ 44 հասցեում գտնվող հողամասի վրա նոր կառուցվող անասնաշենքի շինարարության թույլտվություն :

2. Պարտավորեցնել Դանիել Գագիկի Մնացականյանին Մարտունու համայնքապետարանի 900145101060 հաշվի համարին վճարել 15000 (տասնհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ տեղական տուրք շինարարության թույլտվության համար:

3. Պարտավորեցնել կառուցապատողին շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ Մարտունու համայնքի ղեկավարին ներկայացնել №2-5 ձևի տեղեկանք:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ Հ. ՏՈՆՈՅԱՆ

06 հոկտեմբերի 2021 թվական
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

N 305-Ա 06 հոկտեմբերի 2021 թվական

ԴԱՆԻԵԼ ԳԱԳԻԿԻ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 19.03.2015 թվականի №596-Ն որոշման, Մարտունի համայնքի ավագանու 16.12.2020 թվականի թիվ 82 -Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով Դանիել Գագիկի Մնացականյանի կողմից ներկայացված դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Դանիել Գագիկի Մնացականյանին տալ քաղաք Մարտունի, Պարույր Սևակի փողոց թիվ 44 հասցեում գտնվող հողամասի վրա նոր կառուցվող անասնաշենքի շինարարության թույլտվություն :

2. Պարտավորեցնել Դանիել Գագիկի Մնացականյանին Մարտունու համայնքապետարանի 900145101060 հաշվի համարին վճարել 15000 (տասնհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ տեղական տուրք շինարարության թույլտվության համար:

3. Պարտավորեցնել կառուցապատողին շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ Մարտունու համայնքի ղեկավարին ներկայացնել №2-5 ձևի տեղեկանք:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ Հ. ՏՈՆՈՅԱՆ

06 հոկտեմբերի 2021 թվական
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

N 306-Ա **07 հոկտեմբերի 2021 թվական**

ՌՈՒԲԻԿ ՀՈՎԻԿԻ ՍԱՀԱԿՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՉԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մարտունու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքային տնտեսության բաժնի աշխատակիցների կողմից կազմված 30.09.2021 թվականի թիվ 40 արձանագրությունը, և 04.10.2021 թվականի իրավաբանի թիվ 88 եզրավարույթը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և 04.10.2021 թվականի Մարտունու համայնքապետարանում իրականացված վարչական վարույթի ընթացքում բացահայտված գործի բոլոր հանգամանքները, հաստատված համարելով Ռուբիկ Հովիկի Սահակյանի կողմից իր սեփականությունը հանդիսացող շինությանը կից 2009 թվականին կառուցել է 26,02քմ արտաքին մակերեսով կցակառույցը և աստիճանները, 1979 թվականին կառուցված 69,42քմ արտաքին մակերեսով նկուղի շինարարության փաստը և ղեկավարվելով <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերության , <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 26 -րդ կետի Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 188-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Ռուբիկ Հովիկի Սահակյանի նկատմամբ արձանագրված վարչական իրավախախտման համար փաստը, վարչական իրավախախտման պատասխանատվության չկիրառել, կատարած իրավախախտման համար նախատեսված վարչական տույժ նշանակելու ժամկետները բաց թողնելու հիմքով:

2. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի իրավաբան-գլխավոր մասնագետ Զավիկ Խաչատրյանի վրա:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ռուբիկ Հովիկի Սահակյանի որոշման ընդունման մասին իրազեկմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ Հ. ՏՈՆՈՅԱՆ

07 հոկտեմբերի 2021 թվական
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

N 307-Ա

08 հոկտեմբերի 2021 թվական

ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ ԹԱՂԱՄԱՍԻ 6-ՐԴ ՇԵՆՔԻ ԹԻՎ 8 ԲՆԱԿԱՐԱՆԸ ՎԱՐՁԱԿԱԼ ԱՐԿԱԴԻ ՍԱՄՎԵԼԻ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մարտունի համայնքի ավագանու 14.02.2019թ. թիվ 15 որոշումը, նկատի ունենալով, որ Արկադի Սամվելի Գասպարյանը ամբողջությամբ մարել է բնակարանի վարձավճարները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Մարտունի քաղաքի Զորավար Անդրանիկի թաղամասի 6-րդ շենքի թիվ 8 բնակարանը անհատույց սեփականություն իրավունքով նվիրել վարձակալ Արկադի Սամվելի Գասպարյանին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արկադի Սամվելի Գասպարյանին սույն որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ Հ. ՏՈՆՈՅԱՆ

08 հոկտեմբերի 2021 թվական
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

N 308-Ա

08 հոկտեմբերի 2021 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ «ՄԱՐՏՈՒՆՈՒ ՄԱՆԿԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ» ՀՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻՆ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Մարտունու մանկական արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի տնօրենի 07.10.2021 թվականի №824 գրությունը, հաշվի առնելով, որ ՀՈԱԿ-ի աշխատակիցները բարեխղճորեն կատարել են իրենց աշխատանքային պարտականությունները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.«Մարտունու մանկական արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի տնօրենին և աշխատակիցներին տրամադրել միանվագ դրամական պարգևատրում հետևյալ չափերով՝
1.1 Նազարյան Հասմիկ - 70000 (յոթանասուն հազար) դրամ,
1.2 Գալստյան Դիանա - 40000 (քառասուն հազար) դրամ,
1.3 Հովհաննիսյան Մարինե - 40000 (քառասուն հազար) դրամ,
1.4 Գասպարյան Աքսաննա - 40000 (քառասուն հազար) դրամ,
1.5 Խլղաթյան Հասմիկ - 40000 (քառասուն հազար) դրամ,
1.6 Հարությունյան Մետաքսյա - 40000 (քառասուն հազար) դրամ,
1.7 Խլոյան Մարիամ - 40000 (քառասուն հազար) դրամ,
1.8 Դավթյան Անուշ - 40000 (քառասուն հազար) դրամ,
1.9 Շահումյան Լիլիթ - 40000 (քառասուն հազար) դրամ:
2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսների կառավարման և եկամուտների հավաքագրման բաժնին կատարել վճարում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ Հ. ՏՈՆՈՅԱՆ

08 հոկտեմբերի 2021 թվական
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

N 309-Ա

08 հոկտեմբերի 2021 թվական

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՏԱՓՆՅԱ 2-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ 31 ՀԱՍՑԵԻ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՈՒՄԻՑ ԱՌԱՋԱՑԱԾ 0,0834 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՈՒՅՔԻՆ ՆՈՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35 -րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 29.12.2005 թվականի N°2387-Ն որոշման 48-րդ կետի պահանջներով

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Մարտունի համայնքի Գետափնյա 2-րդ փողոց թիվ 31 հասցեի գույքի բաժանումից հետո առաջացած 0,0834 հա մակերեսով 05-003-0462-0004 ծածկագրով գույքին տրամադրել Մարտունի համայնքի Գետափնյա 2-րդ փողոց թիվ 31/1 հասցեն:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ Հ. ՏՈՆՈՅԱՆ

08 հոկտեմբերի 2021 թվական
ք. Մարտունի